

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/11

3 մայիսի 2016 թ.

Քննարկվեց «Մայր և որդի Թամիրյաններ» ՍՊԸ 04.04.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 26.10.2015թ-ի թիվ 1077/03 որոշման դեմ:

«Մայր և որդի Թամիրյաններ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Գանգատաբերը հայտնում է, որ աշխատանքի դադարեցման պահից իրեն չի տեղեկացվել որևէ պարտքի մասին, ինչպես նաև մինչ օրս չի ստացել ծանուցում սուղանքի մասին:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Մայր և որդի Թամիրյաններ» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 23.10.2015թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 198.818 դրամ, որից եկամտահարկ 38.711 դրամ, սոցիալական ապահովության վճար 160.107 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 26.10.2015թ-ին ընդունվել է թիվ 1077/03 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Մայր և որդի Թամիրյաններ» ՍՊԸ-ից 198.818 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հազամանքների վերաբերյալ: Գործին առնչվող բոլոր հանգամանքները բացահայտելու, պարզաբանելու (համակողմանիության և լրիվության ապահովում), հետևաբար իրավաչափ որոշում ընդունելու համար անհրաժեշտ է, որպեսզի մինչև գործով որոշում ընդունելը վարչական մարմինն իրազեկ դառնա գործի ելքով շահագրգիռ բոլոր անձանց կարծիքներին, հատկապես, եթե ընդունվելու է միջամտող, այդ թվում՝ անձին պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտ: Այդ տեսանկյունից շատ կարևոր է վարչական վարույթի մասնակիցներին լսելը: Ըստ այդմ, վարչական մարմինը պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց

ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռել արտահայտվելու վարչական վարույթում քննվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Հանձնաժողովը գտնում է, որ վարչական վարույթում անձին լսված լինելու հնարավորություն ընձեռելու վարչական մարմնի պարտականությանը նախորդում է վարչական մարմնի մեկ այլ պարտականություն՝ վարչական գործի քննության տեղի և ժամանակի մասին շահագրգիռ անձին պատշաճ ձևով ծանուցելը, ինչը բխում է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված կանոնակարգումներից:

Գործի քննության մասին վարույթի մասնակիցներին ծանուցելը պետք է նպատակ հետապնդի ապահովել անձին լսելու հնարավորությունը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը: Հետևաբար, վարչական վարույթին ծանուցված չլինելու պայմաններում անձը զրկվում է արդյունավետ պաշտպանության միջոցից, որպիսի իրադրությունն անթույլատրելի է:

Տվյալ դեպքում գանգատաբերը պատշաճ ձևով չի ծանուցվել գործի քննության ժամանակի և վայրի մասին, ընդհանրապես չի հրավիրվել վարույթին: Արդյունքում չի ապահովվել գանգատաբերի լսված լինելու իրավունքը, որով ըստ էության նա զրկվել է իր իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից, որպիսի պայմաններում խախտվել է գանգատաբերի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված պետական մարմնի առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Որոշումն ընդունվել է օրենքի խախտմամբ, ինչպես նաև խախտվել է գանգատաբերի իրավունքը, որպիսի փաստը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի կիրառմամբ Որոշումն անվավեր ճանաչելու հիմք է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 26.10.2015թ-ի թիվ 1077/03 որոշումը:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչությանը.

«Մայր և որդի Թամիրյաններ» ՍՊԸ-ի ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին կայացնել նոր որոշում՝ պահպանելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումները:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ